

ՊԻԼԻՊՈ ԿՐԵՍՏՈՎԻ

ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԷջ

(Պատկեր պիւղական կիանքից)

ՀԵՂԵՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՅ ԵՎՔՆԱԿԵՇՈԱԿՐՈՒԹԵԱՄԲ

Թարգմ. Պ. Ա.

Գիշե է 10 հոդ.



Թ Ի Ֆ Լ Ի Բ Զ

ՀԱՅՐԱՎԱՀԱՐԺ տպարան «ՀԵՂԵՆԵՐ» ընկ. Մաղաթեսն վող. № 5

№ պ.ր.մ.ց գրադարանու բիւլի 997 19 NOV 2011

899.962.1

4-54

ար

ԳԵՐԻՓ ԱԼ ԳԵՐԵՎՈՒՆԻ

ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԷԶ

1001
4933

(Պատկեր գիւղական կեանքից)

ՀԵՂԻՆՅԱԿԻ ՊՈՏՏԿԵՐՈՎ ԵՒ ՀԵՅՑԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ



Թ Ի Ֆ Լ Ի Զ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱտկերան «ՀԵՂԻՆՅԱԿԻ ՊՈՏՏԿԵՐՈՎ» ընկ. Մաղաթեան փող. № 5.

ԴԱԻԻԴ ԿԼ ԳԻԱՇՎԻԼԻ

(ԽԵԲՆԱԼԻԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)

6ս ծնուել եմ 1863թ. յունուարի 1-ին Սփ-
մանէթ գիւղում, որ գտնուում է Քութայիսի մօտ:
Հայրս Փոքը կալուածատէր ազնուականներից էր.
մինչև ծերութեան օրերը նա ծառայում էր Քու-
թայիսում, իսկ տունը կառավարում էր մայրս:
Ինը տարեկան
հասակում ինձ
տարան մու-
սաստան, ուր
մուայ կիւի
զինորական
գիմնազիան:
Այն ժամանակ-
ներում վրաց Պ. Կըլիսաւիլի ըլ: 1872թուա-
կանին քսան և հինգ հոգի միասին ընդունուե-
ցանք: Դրանցից աւարտեցինք միայն 5—6 հո-
գի, մնացածները ոմանք մեռան հիւանդութիւ-
նից, ոմանք էլ չը կարողացան իրանց ուսումը



ազնուկանների
որդիներից տ-
մեն տարի քա-
ռասուն հոգի
տանում էին
մուսաստանի
զինորական
գիմնազիանե-

շարունակել: Գիմնազիան այն ժամանակ շատ լաւ հիմքերի վրայ էր դրուած. բոլոր ուսուցիչներն ու դաստիարակները նշանաւոր մարդիկ էին և չը պէտք է զարմանալ, քանի որ վրանք 1860 թուական երի գաւակներ էին: Ամբողջ երեք տարի մասցի այնտեղ, ծնողներս ամառուայ արձակուրդներին չէին տանում իրանց մօտ, այն երկիւղից՝ թէ մի գուցէ ես բոլորովին հրաժարուէի կրկին Ռուսաստան գնալուց: Այդպիսով մայրենի լեզուու բոլորովին մոռացայ, այնպէս որ երբ 4 դ տարուայ ամառը եկայ հայրենիք, ոչ կարողանում էի խօսել մայրենի լեզուով և ոչ էլ հասկանալ: Հարկաններից մէկը կատակեց մերոնց ասելով «Օքնուածներ եթէ լուսաւորութիւնը համբանալ է նշանակում, էլ ինչո՞ւ համար էիք երեխին կորցնում, ձեր սենեակներից մէկում կը փակէիք և ինքն իրան կը համրանար, այն ժամանակ գոնէ ձեզանից մօտիկ կը լինէր»: Ամառուայ ընթացքում մայրենի լեզուն քիչ սովորեցի, հետո տարայ Ռուսաստան վրացերէն զրքեր և այնտեղ կարդում էի: Սրա վրայ աւելացաւ նաև այն, որ կիսի հոգեոր ակադէմիա եկան վրացի ուսանողներ (այն ժամանակ համալսարանում ոչ մի վրացի չը կար՝) Նիկօ Լոմառը (Վրաց սիրելի գրողը) ի. իլուրիձէ, Գիօրգի Սահապիշվիլի (եպիսկ. Կիրիոն), Գիօրգի Ալաղաշվիլի (վարդապետ): Սըրանց ծանօթութիւնը մեծ ազդեցութիւն ունե-

ցաւ ինձ վրայ. մանաւանդ անջնջելի ազգեցութիւն գործեցին՝ Նիկօ Լոմառըի և ի. իլուրիձէ, որոնց եղբայրական սիրոյ տակ աճեց սէր զէպի հայրենիք և հետաքրքրութիւն գէպի նրա ճակատագիրը: 1880 թ. աւարտեցի գիմնազիան և փոխադրուեցի Մոսկուայի գինուորական ուսումնարանը, որ վերջացրի 1882 թ. և դարձայ զինուորական, որպիսի պաշտօն շարունակում եմ մինչև այժմ: Նոյն թուականին վերադառնալով հայրենիք, անմիջապէս սկսեցի պարապել մայրենի լեզուով, պատմութեամբ և գրականութեամբ: Շատ էի նեղանում, որ օրինաւոր կերպով չէի կարողանում գործածել իմ մայրենի լեզուն: Ամբողջ տասը տարի աշխատանք թափեցի մայրենի լեզուս սովորելու համար և ապա միայն այդ բանից յետոյ վստահացայ ձեռքս գրիչ առնել: Այդ միջոցին յաճախ դանուում էի գիւղում, շփւում էի գիւղացոց հետ, ազնուականների ու գիւղացիների մէջ ծանօթանում էի գիւղական կեանքին ու գրութեան և ինչ որ տեսնում էի շուրջս, այնպէս յուզում էր ինձ, որ ուզեցայ տեսածս ու զգացածս հաղորդել նաև վրաց հասարակութեան: Բախտս ժպտաց. անկեղծօրէն պատմած և կեանքից վերցրած պատկերներս ուշադրութեան արժանացան: Մանաւանդ «Սոլոմոն Մորբելաձէ», «Սամանաշվիլու խորթ մայրը», «Քամուշաձէի կարուութիւնը» պատմուածքները: Իմ բոլոր պատ-

մուածքները տպւում՝ են «Մօամբէ» ամսագրում,
իսկ թղթակցութիւններս՝ «Յնօբիս Փուրցէլի» լրա-
գրում։

18 սպրին 1905 թ.

ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԵջ

(ՊԱՏԿԵՐ)

Պատարագն աւարտուել էր։ Լայնատարած
լորենու տակ համախմբուած զիւղացիների մէջ
կանգնած էր բարձրահասակ երիտասարդ քահա-
նան և տպացած խօսում էր։

—Միթէ ես ինքս դժգո՞ն չեմ իմ դրութիւ-
նից, օրհնուածներ... Այն, իրաւունք ունէք գան-
գատուելու... Յաճախ այստեղ չեմ լինում... Զեր
պահանջած ժամանակին քահանայ չէր ունենում,
զրկուած էք ժամերգութիւնից, բայց ի՞նչպէս ա-
նեմ, սիրելիք, որ այսպէս չը լինի... Այն, դուք
ուզում էք որ քահանան միշտ ձեզ մօտ լինի, այդ
մասին ես շատ եմ աշխատել, բայց չը զիտեմ
ի՞նչ ճանապարհով հասնեմ նպատակիս, քանի որ
ամբողջ զիւղում չը կարողացայ մի բնակարան
ճարել... Զը նայած ինձ համար շատ ծանր է տան
վարձ վճարել, սակայն ես պատրաստ եմ ամեն
նեղութիւն համբերութեամբ տանել, միայն թէ
կարողանայի ձեր դժգո՞նութիւնը հեռացնել... Աս-
տուած էլ զիտէ, որ ինքս էլ եմ նեղանում, շատ

Եմ նեղանում այսպիսի անյարմար դրութիւնից, բայց ոչ մի միջոց չը կարողացայ գտնել... Քանի որ այս պաշտօնի մէջ եմ, թափառում եմ այստեղից այնտեղ, ժամանակիս մեծ մասը ճանապարհին եմ վատնում. եկեղեցուց և ծխականներից հետու եմ... Ես քահանայ եմ և ինձ այն է տանջում, որ այսպիսի վեհ անուն եմ կրում, սակայն ի՞նչ քահանայ եմ... Ահա պատարազը վերջացրի և հինգ հիմա անմիջապէս տուն պէտք է գնամ, թէ չէ ճանապարհին կը մթնի... Աստուած իմ, չը գիտեմ ի՞նչ անեմ... Անդադար սրա մասին եմ մտածում, Աստուած էլ գիտէ, որ շատ եմ նեղանում այս տեսակ դրութեան համար...

— Օգնենք, օգնենք... բոլորեքեանս օգնենք. Ձինենք մի փոքրիկ բնակարան մեր եկեղեցու մօտ, այն ժամանակ քահանան մօտ կունենանք և այդպիսով քահանայի և մեր մէջ եղած բոլոր գործոնութիւններին ու արտունջներին վերջ կը դրուի, — վերկենալով ասաց մի ծերունի ազնուական, որ նստած էր այնտեղ գերեզմանաքարի վրայ:

— Օրինուածներ, մենք մեզ համար չենք կարողանում սներ շինել, հիւղերի մէջ ենք աղբում, քահանայի համար բնակարան որաեղից շինենք, բացականչեց մի ծերունի գիւղացի, որին ուրիշներն էլ ձայնակցեցին:

— Ուրեմն ի՞նչ պիտի անի այս մարդը, — շա-

րունակեց ծերունի ազնուականը, — ի՞նչ պիտի անի:

— Պարոն, առաջ էլ ենք ունեցել քահանայ, բայց նրանց համար բնակարաններ չենք շինել. դրան ի՞նչ եղաւ:

— Այն, ունեցել էք, իմ կիմոթէ, բայց նաքո հարեանն է եղել այս գիւղի բնակիչ...

Իսկայժմ քո հարեանների շրջանում մէկը չը կայ, որ քահանայութեան համար պէտքը գայ, և ահա ուղարկել են այս լուսաւորուած մարդուն, հասկացող և գիտուն, որին չես կարող համեմատել քո առաջուայ ունեցած քահանայի հետ, ներողութիւն...

— Այդ ոյդպէս է, պարոն, իհարկէ լաւ է որ լուսաւորուած քահանայ ունենանք, բայց ծանր բեռ է գառնում, պարոն նեստոր... Մեր սեփական հոգսերն էլ բաւական է մեզ, հազիւենք կարողանում շունչ քաշել. մենք դրանից ենք սպասում օգնութիւն և աջակցութիւն, այն ինչ մեր նեղ դրութիւնը թեթևացնելու փոխարէն ծանր բեռ է գառնում... մեր պատսպարելու և պահելու է գառնում... Մենք էլ մեղք ենք:

— Ճիշտ է, ճիշտ — այս ու այն կողմից ձայներ լուսեց այդ խօսքերի վրայ:

Այդ խօսքերը նիզակի նման ծակում էին երիտասարդ քահանայի սիրտը. յուզուած՝ երբեմն միրուքն էր սղալում, երբեմն ընչացքները ոլորում գողգոջուն ձեռքով:

— Խնդրում եմ դադարեցնէք այս խօսակշռութիւնը, — դիմեց նա ոսերէն իր պաշտպան աղուտականին:

— Համբերիր, համբերիր, տէր հայր... Մի նեղանար. սրանք այսպէս ձզձըղալ գիտէն՝ նոյնպէս ոսերէն պատասխանեց Նեստորը քահանային, ավա կրկին դիմեց ժողովրդին. — Մի հակառակուէք, մի, մի... օգնենք մեր քահանային, բնակեցնենք մեղանից մօտիկ, հարևան կը դառնայ և մեզ էլ լաւ կը հովուի... Մի փոքրիկ բնակարան շինենք այս եկեղեցու մօտ և ընդ միշտ կը վերջանայ գծոնութիւնը քահանայի և գիւղացոց մէջ... Ով գիտէ, կարժանանանք երբ և իցէ մեր գիւղացի քահանայ ունենալուն... Այս մասին միշտ խօսակցութիւն և աղմուկ ենք բարձրացնում, ուրեմն լաւն այն է, որ մի անգամից վճռենք ու վերջացնենք և այդ մասին այլևս խօսակցութիւնը չը նորոգենք... Բոլորեքանս էլ տեսնում ենք, որ այսպէս հեռու քահանայ ունենալը լաւ չի... Մեր պարտքն է. որ ոչ մի ջանք չը խնայենք և մօտկացնենք քահանային... դէն, էլ մի տատանուէք... վճուցէք և այնպէս էլ կը լինի...

Գիւղացոց մէջ խըսում բարձրացաւ. բուրեքեան խօսում էին. բոլորի դէմքի վրայ դըգոնութիւն էր երեռում: Քահանան իրան շատ անյարմար դրութեան մէջ էր զզում և մտագրում էր փախչել եթէ ծերունի Նեստորի պատիւը չը լինէր: Նրա լսողութիւնից ոչ մի խօսք բաց չէր

մնացել գիւղացիների ասածներից. հէնց այդ էր պատճառը, որ նա հետզհետէ աւելի և աւելի անհանգստանում էր: Յանկարծ նա ամբողջ մարմնով ցնցունց, նիզակահարի նման պատռեց դէպի ձախ և դողդոջուն, անբնական ձայնով բացականչեց.

— Ճիշտ է, ճիշտ, պարոն կվթիմէ, ճիշտ է:

Բոլորեքեան կանգ առան: Տիրեց լուսութիւն: Միջին հասակով մի գիւղացի, որին քահանան դիմեց սփրթնած երեսով, կանգնած էր և ամօթահար նայում էր դէպի բարկացած քահանայի կողմը:

— Ճիշտ ես նկատել... կարծեմ ես նրա համար եմ աշխատում ձեղանից մօտիկ լինել, որ աչք ունեմ ձեր ունեցածով ապրելու... Շատ լաւ ես հասկացել. շատ լաւ. թնդ քո սրտով Աւտուած քեզ տայ... Փու քո մարդութեան: Քեզպէս մարդու հետ նոյն խոկ չարժէ խօսել... Ամօթ քեզ համար, յանկարծ բացականչեց հայր Զոսիմը, դողդոջուն ձեռքով ճակատի վրայ իջեցրեց իր լայն բոլորքով գլխարկը և հեռացաւ շուտաճ բազմութիւնից:

Բայց յետոյ յանկարծ շուռ եկաւ, մօտեցաւ իր պաշտպան ծերունի ազնուականին.

— Մնաք բարեաւ, — ասաց նա, ձեռքը սեղմելով և ատա հեռացաւ այն խմբից:

Պայծառ դէմքով, պղտոր աչքերով, նա կանգ տռաւ մի տեղ և սկսեց դէս ու դէն նայել, կարծես թէ մէկին փնտրելիս լինէր եկեղեցու գաւ-

թում: Նա մտածմունքներով պաշարուած երկար ժամանակ կանգնած էր սոյն տեղում շշմածի պէս և բոլորովին ոչինչ չէր հասկանում, թէ ինչ էր ասում իրան մօտեցող գիւղացի պատանին և երկար ժամանակ գուցէ չը նկատէր նրան, եթէ տղան իր առաջարկութիւնը կրկնելիս բարձրաձայն չարտասանէր իր ասելիքը:

Այս բարձրաձայն բացականչութիւնը սթափեցրեց հայր Զոսիմին, նայեց և երբ տղային անսաւ, կոպտաբար դիմեց:

— Ի՞նչ ես ուզում:

— Հէնց այս ըոսէիս պէտք է բարեհաճէք հետս գալ, տէրհայր:

— Ի՞նչ կայ, — դարձեալ կոպտաբար և յօնքերը կիտելով հարցրեց զայրացած քահանան:

— Մեծ եղբայրս շատ նեղացած է:

— Յետո՞յ:

— Ուզում ենք հաղորդել, — ասաց տղան և աչքերը արտասուբռով լցուեցան: — Շնուտ, չարդ տանեմ, շնուտ... Այնպէս է որ քիչ է մնում մայրըս էլ վշտից խելագարուի. էլ մի ուշանաք, տէրհայր:

— Գնահ էն խելառ Պետրոս պահապանին գըտիր, ջորին դուրս տարէք բակի դռան մօտ, խսկ ես աղօթագիրքը դուրս կը բերեմ և խսկոյն կը դամ...

— Դէ, շնուտ արա, չարդ տանեմ, — ասաց տղան ու վազեց Պետրոսին որոնելու, բայց նո-

րից շուռ եկաւ և դիմեց քահանային. — ոչ մի գեղ չօգնեց. գուցէ աղօթքն օգնի... աղօթք էլ պիտի կորդաք:

— Լաւ, լաւ... ինչ որ ասացի, գու այն արա...

Քահանան մտաւ եկեղեցի, այնտեղից վերցրեց աղօթագիրքը, հրամայեց ժամկոչին, որ եկեղեցին փակի ու էլ չը կարողացաւ համբերել. սկսեց բարկանալ տիրացուի վրայ, որ առանց նրան հարցնելու անհետացել էր, առա արագ քայլերով դիմեց գէպի բակի դուռը:

Պետրոսն արդէն այնտեղ էր ջօրու հետ:

— Դու ինձ հետ պիտի գաս, — կարճ ասաց նրան քահանան, և աղօթագիրքը տալով նրան՝ այս դռւ բեր:

— Լաւ, — ոգեորուած պատասխանեց Պետրոսը. ասպանդակը քաշեց գէպի քահանան և նրա ձեռքից առած աղօթագիրքը կուն տակ դրեց:

Հայր Զոսիմը մի անգամ ևս աչքի տակով նայեց լորենու տակ խօսող խմբին և որտամորմոք դիմեց գէպի հիւանդը:

Ուրեմն այդպէս. հայր Զոսիմը միայն ծանր ըեռ է իր ծխականների համար. աչքը դրել է, որ իր հոգեսոր զաւակներից յափշտակածով աւորի: Նրա համար է աշխատում ընակարան ունենալ գիւղում, որպէսզի ապրուստի միջոց գտնի իր ընտանիք համար Այս կարողացաւ ձեռք բերել ժողովրդի աչքում. այս է, այս ժողովրդի բերել ժողովրդի աչքում. այս է, այս ժողովրդի հայեացքը իր մասին. այս տեսակ յարաբերութիւն

քահանայի և ծխականների մէջ... ծխականների
ունեցածի վրայ աչք տնկած քահանայ, ծանր
բեռ, ուստի և նրա հեռու մնալը գերազասում
էն:— Միթէ այդ լող երիտասարդ քահանայի
սիրտ չէր վիրաւորուի քանի որ բոլորովին նա այլ
յոյսերով էր գալիս այդ ժողովրդին այցելութեան,
կարծելով թէ սրանց մէջ կը մտցնէ յարգանք
դէպի հոգեոր բարձր կոչումը, սիրել կը տար նը-
րանց անունը, որոնք քարոզում են սէր գէպի
մերձաւորները, որոնք լուսաւորում են միաքը՝
մաքրելով սիրաը բոլոր կեղտերից և չարիքներից:

Ապա մուր է այդ բոլորը. մուր է բարելաւելու
մի որևէ նշան քահանայի և ծխականների մէջ.
մուր է սէր, յարգանք, հաւատ, յոյս, մուր է այն
բոլորը, ինչի մասին որ ինքը երազում էր դրս-
րանոցում իր լնկերների հետ, որոնց թւում
ինքն էլ պատրաստում էր ապագայ գործու-
նէութեան համար...

Անտուն, ազգատ անանիներով շրջապատուած,
որոնց քրտինքով պիտի ապրէր. մրտեղից, ի՞նչ
միջոցով պիտի ստեղծուէր նրանց մէջ հաւատ,
սէր, յոյս:

Աչքածակ քահանայ:

Այդ այնպիսի ցաւեր էր պատճառում երի-
տասարդ քահանային, այնպիսի կոկիծով լցնում
սիրաը, որ նա պատրաստ էր լալ, արտասուել,
քանի որ այսպէս էր լինելու մինչև մահ, մինչև

որ այդ ատելութեան մէջ շունչը փչէր և հեռա-
նար այս աշխարհից:

Եւ նա անիծում էր իր զլուխը, որ այնպէս
անդիտակցաբար յանձն առաւ այսպիսի ծանր
պարտաւորութիւն, իր վրայ վերցրեց մի այսպի-
սի ծանր զործ, ընդունեց այսպիսի կոչում, որ
հակառակ իր ցանկութեան, միայն ատելութիւն
էր տարածում ժողովուրդի մէջ, ի ցաւ իր սրտի:

Յուզուած քահանան վշտացած սրտով, որի
արիւնը երակներում ուժգին շարժւում էր, ան-
հանգիստ խթում էր փոքրիկ ջորուն, որ հետրզ-
հետէ արագայնում էր գնացքը: Զորու հետ միա-
սին չարչարում էր նաև հասակաւոր Պետրոսին,
որ չէր ուզում յետ մնալ, այդ պատճառով աղօ-
թագիրքը կոնասակին, չուխայի փէշերը յետ ծա-
լած՝ ցատկուելով քրանաթոր հետեւում էր քա-
հանային:

Պետրոսին արգին յայտնի էր պատահածը,
թէ ինչպէս զայրացրին երիտասարդ քահանային,
ուստի և հէնց նրան հանգատացնելու, վիշտը վա-
նելու նպատակով հետեւ բարձրածայն գոչում էր՝
հայր Զոսիմէի ուշագրութիւնը զրաւելու համար.

— Սաստիկ փոխուեց այս ժողովուրդը...
սաստիկ փոխուեցան... բոլորովին փոխուեց. ի՞նչ
կարող է անել մարդ... շատ անհնագանդ եղան...
փչացաւ աշխարհա, բոլորովին փչացաւ, ի՞նչպէս
տեսնում եմ. սակայն ի՞նչ կարող է անել մարդ,
ի՞նչ կարող է...

Բայց հայր Զոսիմը կամ չէր լսում այս խօսքերը, կամ եթէ լսում էր, նրանք երեխ աւելի դառնացնում էին, քանի որ նա, խուսափելու համար հետզհետէ աւելի շտապեցնում էր ջորիին, կարծես աշխատում էր Պետրոսին յետ թողնել, բայց վերջինս յետ չէր ուզում մնալ, զլիսապատառ վազելով հետևում էր քահանային, ցեխ, քար պատահելիս ցատկում էր վրաներից, բամում էր քրաինքը և կրկնում, թէ ինչպէս փչացաւ աշխարհը, ինչ անհնազանդ եղան և թէ իրանց տղիտութիւնից ինչպէս կորցրին մարդկային դիտակցութիւնը:

Բաւական խորդ ու բորդ ճանապարհ էին անցել արգէն, երբ նրանց դէմ առ դէմ եկող մի քահանոյ հանգիպեց:

—Հայր Զոսիմ, հայր Զոսիմ—կանչեց հանդիպողը—տէր-հայր երեսում է շատ ես նեղացած. դիմացիր, դիմացիր, հայր, դեռ երիտասարդ ես... Ալպագյի համար խնայիր քեզ. դիմացիր յանուն չօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. ամէն: Երեսդ խաչ հանիր: թու սատանային՝ ասա և վերջացաւ, ուրախ և առանց շունչ քաշելու վրայ տուեց հանդիպող հաստակաւոր, ալեզարդ քահանան, որ իր ջորուն կանգնեցնելով, զլիարկը յետ քաշեց և կիսատ ցոյց տուեց իր ճաղատ զլուխը:

—Դէպի ուր, հայր Միքայէլ, —հարցրեց սովորկան ողջոյնից յետոյ հայր Զոսիմը:

—Քութայիս, այ այս աղային տանում եմ,

գուցէ ապագայում կարողանայ ազգ պայծառացնելիք իւելքով և ուսումով և այս ասելով գլուխը թեքեց դէպի 10—11 տարեկան փոքրիկ երեխայի կողմը, որ իր ետև նստած էր ջորու դաւակի վրայ, ամուր կակել էր հայր Միքայէլի մէջքին, որովհետև ջորու թամքից գուրս նստելու տեղ շատ քիչ էր մնացել: Այսպէս կակել էր ու հօր փարաջայի մէջ փաթաթուել, որ զլուխն ու երեսը բոլորովին չէին երևում:

—Հոգեսթ դպրանոց, հայր:

—Այս, այս... Մեզ չէք հաւանում, օրհնուածներ,—ասաց ծիծաղելով հայր Միքայէլը, և իսկապէս ինչ հաւանելու ենք... Այս դէս ու դէս ընկնելուց, ժողովրդի աղմուկից զլուխս բոլորովին դատարկուեց... Ինչ որ կար մէջը, բոլորը դատարկուեց, ուր որ թուաւ, ինչպէս որ երեկուայ կերած հացը, ճիշտ այնպէս: Թէ չէ, մեր ժամանակ մենք էլ լաւ էինք... Ես էլ գիտէի ինչ որ բաներ... յիշում եմ՝ սովորեցնում էին Գիշպանիայի (Սպանիայի) ծով, Սպիտակ ծով, Պեչորեան լաւրա... Բայց ուր է Գիշպանիայի ծովը, Սպիտակ ծովը, կամ Պեչորեան Լաւրան, այսօր ոչինչ չը գիտեմ... Մի ժամանակ հպարտանում էի, իսկ այժմ այս մատի չափ երեխան ինձանից առաջ անցաւ... Այս տղայ, ուր է Սպիտակ ծովը, —ուր էլ չը գիտես, ամաչացրիր մարդու. Գիշպանիա... հա, հա, հա, —հրնոաց հանաքչի և ճարտար քահանան:

Հէնց այդ ժամանակ յետ մնացած Պետրոսն

էլ հեալով վրայ հասաւ նրանց. հայր Միքայէլին տեսնելուն պէս ողջունեց և օրհնութիւն խնդրեց: —Ա՛, Պետրոս, Պետրոս.—կանչեց տեսնելուն պէս Միքայէլը: —Ի՞նչպէս ես, Պետրոս... խոզի պատմութիւնն ի՞նչպէս է, Պետրոս... Խոզի պատմութիւն... հայր Զոսիմին, հա՛, հա՛, հա՛... լաւ չաղ խոզի...—Չաղ խոզ էլ որաեղից կը լինի, օրհնուած, երբ խոզ արածացնելու տեղ չը կայ... ինչպէս կը չաղանայ, քանի որ ամենքն էլ իրանց խոզերին թոկով կապած են պահում: Չաղ խոզի համար մենք էլ հալումաշ ենք լինում, տէր հայր, բայց ի՞նչ կարելի է անել. ի՞նչ կարելի է անել:

—Դէ, ինչո՞ւ, ինչո՞ւ, Պետրոս, չէ՞ որ չաղ խոզը սիրու կուրախացնի, հօ դիտե՞ս... Հայր Զոսիմէին էլ ուրիշ տրամադրութեան կը բերի... գուցէ հէսց հիմա էլ ձեզ լաւ չաղ խոզ է սպասում, հա՞... հա՞, հա՞,—ծիծաղելով հարցրեց հանաքչի բահանան:

—Ճաշակուող ունեմ,—պատասխանեց Զոսիմէն:

—Ճաշակու՞ղ, ո՞հ, ներողութիւն: Զը դիտէի, թէ չէ այսքան չէի ուշացնի այս խճուղու վրայ, ներողութիւն... Մնաք բարեաւ, մնաք բարեաւ, ասաց և մտրակեց իր մկան նման ջորուն և խօսակիցները բաժանուեցան իրարից:

Երիտասարդ քահանան չը կարողացաւ համբերել, որ չը նայէր դէպի Աստծու այդ օտարու-

տի պաշտօնեայի կողով և սարսափելի վիշտը ճմլեց սիրալը: Միթէ այդ Միքայէլ քահանան իր ապագայի պատկերն էր ներկայացնում: Միթէ իրան էլ նոյնն էր սպասում: Միթէ իր համար և հարցնելու կը դառնայ գոյութիւն ունի՞ թէ ոչ որևէ տեղ Սպանիայի ծով, կամ ուր է Պէջորեան Լաւրան և արտնջելու առիթ կը տայ «չաղ խոզերի» բացակայութիւնը, խոզերի համար արածացնելու տեղեր չը լինելու պատճառով:

—Ո՞հ, Աստուած, Աստուած, — ակամայ բարձրածայն բացականչեց հայր Զոսիմէն և հէնց այդ ժամանակ յետ մնացած Պետրոսի կանչելու ձայն էլ լսուեց.

—Մաիր, տէր հայր, այդունք մտիր... այդ դունով:

Զոսիմէն զլուխը բարձրացրեց և միայն այդ ժամանակ նկատեց, որ արդէն հասել էր հիւանդի տուն ներս մտաւ բացուած զոնով, իշաւ ծածկուած տան գաւթի մօտ, ջորին յանձնեց զիմաւորող Ալֆէզա-տղալին, այդ ժամանակ Պետրոսն էլ յայտնուեց բակում:

—Յարդ ճարիր գրա համար, —ասաց Պետրոսը տղային, երբ նա ջորին կապում էր սիւնից:

Գաւթում քահանային զիմաւորեց զլուխը փաթաթած մի պառաւ կին, որ խորին ակնածութեամբ մօտեցաւ Զոսիմէին և աջը համբուրեց. դա հիւանդի մայր Անուսիան էր:

— Այլու է հիւանդը, — հարցը եց. Զոսկիմէն և
ներս գնաց. — ողջո՞ն ձեզ, ասաց նա:

Տան մէջ սաստիկ մութն էր:

— Այն միւս դուռն էլ բաց արէք: Այս մթին
մէջ միթէ կարելի է մնալ, աւելացը քահանան
դժգոհութեամբ:

Անուսիան շտապեց հրամանը կատարելու:
Ներս թափուող լոյսից այժմ մարդու համար հնա-
րաւոր էր որոշել ամեն ինչ: Պատի երկարու-
թեամբ նեղ տախտի ծայրերին, անկողիններում
երկու հոգի էին պառկած: Ինչպէս երեաց՝ մի
կողմում պառկողը, որի աշքերը վախեցածի նման
նայում էին մինչև քիթը ծածկուած վերմակի տա-
կեց, Զոսկիմէին էլ ծանօթ էր. դա Ալփէզայի նշա-
նելու քոյլ ելիդիան էր, որ երկար ժամանակից
ի վեր հիւանդ էր:

— Ամ է Ալէքսին, — մատնացոյց անելով միւս
անկողնու վրայ հարցը եց Զոսկիմէն:

— Այն, Ալէքսանն է, — հազիւ լսելի, թոյլ ձայ-
նով, որի մէջ արցունքներ էր նկատում, պա-
պասխանեց պառաւ Անուսիան:

— Վերմակը յետ քաշեցէք:

Անուսիան համարեա թէ վախեցաւ, տախտի
վրայ չոքած, կամաց-կամաց սկսեց վերմակը յետ
քաշել հիւանդի երեսից:

— Ալէքսի, որդի, նայիր, քահանան եկել է:
Քրտնաթոր հիւանդը կարմրատակած երե-

սով մի անգամ նայեց դէպի քահանայի կողմը և
կըկին վակեց աշքերը:

— Ի՞նչպէս ես, Ալէքսի, ա... ի՞նչ գործ ունի
քեզ հետ հիւանդութիւնը, լաւ մարդ, — կատակեց
հիւանդի հետ հայր Զոսկիմէն:

— Մեռնում եմ, տէր-հայր, — հազիւ լսելի
ձայնով շնչաց հիւանդը:

— Մի վախենար, մի... այդպէս շուտով վա-
խեցը քեզ հիւանդութիւնը, այ դու անշնորհք.
մարդ ենք՝ երբեմն առողջ կը լինենք, երբեմն
հիւանդ, ինչ անենք. — այսպէս էր միփթարում հայր
Զոսկիմէն Ալէքսուն, բայց պարզ տեսնում էր, որ
աժդահայ տղամարդը օրհասի մէջ էր:

Այն խաւարը, որ այդ տնակում տիրում էր
և որ այնպէս անսախորժ գիպաւ նրա սրտին հէնց
առաջի քայլը ներս գնելու պէս, այդ աղքատու-
թիւնը, այդ թշուառութիւնը, որ տնակի ամեն մի
անկիւնից բուրում էր, այդ պառկած հիւանդները,
որոնց անճարութիւնը աշքի էր ընկնում, այդ
մումոյի նման արձանացած պառաւը, որ լուս
արցունքներ էր թափում — իր անզօրութիւնը՝
սրանց նուիրուելու — այդ բոլորը աւելի ևս ցաւ էին
պատճառում նրա՝ առանց այն էլ մորմոքուած
սրտին, կոկծում էր, անմխիթար գրութեան մէջ
ձգում և այս կեանքի ամեն մի լոյսից զրկում ու
ամեն յոյսից կտրում: Վշտահար սիրար, ալէկո-
կոծուած հոգին, ճնշուած զդացմունքը պահան-
ջում էր արտայայտուել, աղօթքի էր կանչում,

բարձրաձայն աղաղակելու իր անմխիթարութեան,
իր տիրութեան համար:

—Աղօթազիբը, —գոչեց նա և դողդոջուն
ձեռքով սկսեց թերթել գիրքը, յետ քաշեց ճա-
կատի վրայ թափուած մաղերը և երեսը խաչա-
կնքելով սկսեց պարզ կերպով կանչել այնպիսի
ձայնով, որի մէջ լսում էր ցաւոս սրտի դառն
ու ջերմագին պաղատանք:

—Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա, Տէր, ողոր-
մեա, ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողոր-
մութեան քում, ըստ բազում՝ գթութեան քում
քաւեա զանօրէնութիւնս իմ:

—Քահանային պէտք է նախաճաշ տալ: Հօ-
գիտես, երկար ճանապարհ ունի գնալու: Դուք
էլ աւելի ուշացըիք: Առաւօտուանից անօթի է,
ուտելու բան ունիք, —ակնարկեց Պետրոսը Ալ-
ֆէղային:

—Այս, ունեմ, —պատասխանեց Ալֆէղան:
Պետրոսը քահանային մօտեցաւ:

Իսկ քահանան, հոգով տանջուած, յուզուած
այդ անմխիթաը պատկերներով, որ ամեն մի
քայլի վրայ աչքի առաջ բացում էր, տանջանքը,
կարիքը, տեսնելով՝ ջերմ աղերսում էր օգնութիւն
երկնքից, ջերմեանդութեամբ խնդրում էր յոյս,
սփոփանք, իսկ փոխարէն նա զոհ ընդունէր իր
ջախջախուած, տանջուած ու ընկճուած հոգին:

Այս աղաչանքի, այս ջերմ աղօթքի մէջ կար-
ծես թէ նա մի ինչ որ թեթևութիւն և հանգըս-

տութիւն զգաց իր անմխիթար և յուսահատ գը-
րութիւնից. կարծես թէ նա կըկին գտաւ իր հո-
գու անգորը ութիւնը: Ծալեց աղօթազիբքը, յանձ-
նեց Պետրոսին, ծոցից հանեց փոքրիկ մասնա-
տուփը, բաց արաւ այն և հիւանդին մեկնեց
սուրբ հաղորդութիւնը:

Մի անկիւնում մկան պէս կծկուած փոքրիկ
աղջիկը նայում էր և զարմացած աչքերը չուել
էր բարձրահասակ, օտարութի մարդու վրայ:

Հայր Զոսիմէն հիւանդին ճաշակեց:

—Մի վախենաք, Աստուած ողորմած է, —
վախենալու ոչինչ չը կայ, մի վհասուիք: Դու
ի՞նչ ես անում ելիզիա—մօտենալով ասաց հայր
Զոսիմէն երկրորդ հիւանդին: —Այսպէս պառկած
պիտի մնաս, այ աղջիկ, էլ չես մտածում վեր
կենալու, —կատակեց քահանան:

Դեղնած, փոս ընկած այտեր, երեսի վրայ
օտարութի կերպով փայլող աչքերի խնձորները
խաղացին և սաստիկ թուլացած շրթունքներն էլ
սկսեցին շարժուել և թոյլ ձայնով արտասահնած
խօսքերը հազիւ հազ հասան հայր Զոսիմէի ա-
կանջին:

—Երանի Ալեքսուն ոտի վրայ, տեսնեմ ու-
րիշ ոչինչ չեմ ուզում, իսկ ես ի՞նչ հարցնելու եմ:

—Ալեքսու գարզը մի քաշիր, գու վեր կաց
և այն ժամանակ ամեն ինչ լաւ կը լինի, —ծի-
ծաղելով ասաց հայր Զոսիմէն:

Անուսիան սրա վրայ խոր ախ քաշեց և ի
նշան դառնութեան զլուխը շարժեց:

— Ապա, Պետրոս, ջորին — կանչեց քահա-
նան:

— Մի բողէ սպասեցէք, տէր հայր, երկար
ճանապարհ ունէք անցնելու և սոված էք, — կանդ-
նացրեց դռան կողմը գնացող հայր Զոսիմէին Ալ-
ֆէզան:

— Ոչ, ոչ — բացականչեց հայր Զոսիմէն:

— Անկարելի է, տէր հայր, անկարելի — աւե-
լացրեց նաև Անուսիան:

— Ոչ մի բան հարկաւոր չէ:

Քաշում էք քահանան:

— Սպասեցէք, տէր հայր, ինչպէս կարելի է
որ հիմա բաղցած տուն գնաք. ճանապարհին ինչ-
պէս պիտի գնաք: Մի բաժակ զինի խմեցէք, մի
կտոր հաց կտրէք և այնպէս գնացէք, — մէջ ըն-
կաւ Պետրոսը: — Դէհ, էլ մի ուշացնէք, եթէ բան
ունէք, բերէք:

— Եյս բողէիս պատրաստ կը լինի, տէր
հայր, — ասաց աշխատելով Անուսիան որդու հետ:

Հայր Զոսիմէն ստիպուած էր մնալ նախա-
ճաշին: Սփոռյը շուտով զցեցին և Պետրոսը մի
բողէում տիրապետեց, ինչ որ սեղանի վրայ մա-
տուցին քահանային:

— Եյս ինչ նեղութիւն է, օրհնուածի որդի:
Ճիշտ է ուսում առած քահանայ էք, բայց այս
գիւղի աղ ու հացից երբէք չը պէտք է հրաժա-

բուեք, եթէ քեզանից չը պակասի — հօ ոչինչ չի
աւելանայ. վասոք Աստծու, յաջողութիւն, ընտա-
նիքին բարիք և ուրախութիւն, — օրհնեց Պետրո-
սը և դատարկեց զինով լի բաժակը:

Քաղցած քահանայի համար այս նախաճաշը
իրաւ որ հոգուն վրայ հասաւ. նա ախորժակով
էք ուտում: Ոչ պակաս ախորժակով էք ուտում
նաև Պետրոսը, որ մտադիր էր սեղան կառավա-
րելու, եթէ քահանան քիչ ժամանակից յետոյ չը
վեր կենար և չը պատրաստուէք գնալու:

— Լաւ, լաւ, բաւական է, Պետրոս, վեր կաց
և ջորին պատրաստիր:

— Եյս բողէս, տէր հայր, — երկի ափսոսում
էք սեղանը թողնել, այնպէս ծուլութեամբ էք
վեր կենում:

Քահանան Ալֆէզային սկսեց խրատել, թէ
հիւանդներին ինչպէս պէտք է խնամեն և դուրս
գնաց բակը: Զորին դարձեալ ցանկապատի մօտ
էք և յարդ էք ուտում:

— Պետրոս, չը լացի՞ր ինչ որ ասացի քեզ,
— գոչեց հայր Զոսիմէն:

— Սպասեցէք, տէր հայր, սպասեցէք, ինչու
էք այդպէս շտապում: Ցանից գուրս գալով Պետ-
րոսը մօտեցաւ ջորուն, թամքի վրայ կապած
խուրջինը յետ արաւ ու սկսեց մէջը հացեր
դարսել:

— Եյտ ինչ ես անում, Պետրոս, — հարցրեց
հայր Զոսիմէն:

— Թաղէք, տէր հայր, թնդէք, մի խառնուէք,
ի սէր Աստուծոյ:

— Յիմարութիւն մի անի, այ աղայ:

— Էհ, օրհնուած, դուք էլ լայեղ չէք ա-
նում... զիւղումն էք, զիւղի սովորութեանն էլ
պէտք է հետեէք, թէ չէ՝ եթէ չը պակասի, ա-
ւելանալով ոչինչ չի աւելանայ... վերջապէս ար-
դէն ժամանակ է որ հետեէք զիւղի սովորու-
թիւններին:

— Ես քեզ խնդրում եմ, Պետրոս, որ ինձ
այս տեսակ բաներից հեռու պահես, — դժգոհու-
թեամբ ասաց հայր Զոսիմէն:

— Շատ լաւ, այժմ կարող էք գնալ ձեր ճա-
նապարհով. ապա նատեցէք, — ասաց Պետրոս,
երբ խորջինի բերանը կապեց և թամբի վրայ
ամրացրեց պարանով: — Էլ մի ուշանաք:

Հայր Զոսիմէն զլուխը շարժելով ասաց.

— Ինչու է լեզուդ այդպէս երկար, դժգ-
ըախտ արարած:

— Որ շատ խօսեմ, տէր հայր, — իսկոյն պա-
տասխանեց Պետրոսը:

Հայր Զոսիմէն ակամայ ծիծաղեց և այդպէս
ծիծաղելով ճանապարհ ընկաւ, իսկ Պետրոսը Ա-
նուսիայի և Ալֆէդայի կողմը դարձաւ:

— Դեռ էլի քաշւնամ է, երիտասարդ է, իսկ
յետոյ ոչ թէ միայն հաց, այլ չոր սոկորներն էլ
կը դարսի խորջինում և կը սկսի քաշ տալ դէ-
պի իրանց տուն... երեխանցը գոնէ մի-մի կտոր

կընկնի, — ծիծաղելով ասաց նա մօր և որդուն,
մնաս բարեւ արաւ նրանց և դիմեց դէպի իր
տուն:

Հայր Զոսիմէն բաւականի երկար ճանապարհ
ունէր անցնելու, սակայն այսօր աւելի ևս եր-
կար թուաց նրան. ամբողջ ճանապարհին միայն
նրա մասին էր մտածում, ինչ որ այսօր զլխով
անցել ու տեսել էր:

Տուն հաննելուն սկս բակում նրա աչքի ա-
ռաջ ներկայացաւ մի տգեղ պատկեր: Տան առաջ,
շապկանց բորիկ ոտներով և բոլորովին ցեխոտուծ
երեխաններ ցեխի մէջ կանգնած տրորում էին ցե-
խը:

— Թէկուէ, թէկուէ... այս երեխանց նայիր,
է: Երբեմն հարկաւոր է նայել, ա կին — կանչեց
նա ջորուց իջնելով. ապա ջորին կապեց սիւնից
և փոքրիկ բնակարանի պատշգամբը բարձրացաւ:

Կանչելու վրայ տանից գուրս վագեց նորա-
տի կինը, զիսի փաթաթանի ծայրեր յետ զցած,
թիերը յետ ծալած:

— Ի՞նչ է, — զարմացած հարցրեց նա:

— Էլ ինչ, ա կին, այս երեխանց երբեմն
հարկաւոր է նայել... Մի տես թէ ինչի նման էն,
ինչպէս են ցեխոտուել. կիւրակի օր է, այսօր պի-
տի հացցնէիր:

— Ի՞նչ պիտի հացցնէի, այ մարդ... մի-մի
ձեռք հազուստ ունին, եթէ այն էլ կեղտոտեն,
յետոյ ի՞նչ պիտի անեն... շատ շուտ կը հասնեն

հոր հագուստին... քո եղբօր որդիներն էլ բոլովովին փշացրին այս անպիտաններին... Գիգա, Գիգա... էլենկա... չէք լսում... այս ըստէիս այստեղ եկէք... այս ըստէիս, թէ չէ երկուսիդ հոգին էլ կը հանեմ... սաստեց Թեկղէն երեխանց:

Վախեցած երեխաները վագեցին մօր մօտ. իսկ մայրը մօտեցաւ ջորուն, խուրջին հետ արաւ, ձեռքով շօշափեց, ուզում էր իմանալ թէ մէջը ինչ կար, դէյրայի ծալքի տակ ծածկեց, որ տեղերանք չը տեսնէին, որոնք նոյն տաճն էին ապրում, շտապով վագեց դէպի իր սենեակը:

—Ես էլ մի բան էի կարծում,—դժգոհութեամբ ասաց նա, երբ խուրջինը բաց արաւ և միայն հացեր տեսաւ:

—Ի՞նչ էիր. վնարում—ժպտալով և հեղորդէն հարցրեց հայր Զոսիմէն կնոջը, որ վերակուն հանել ու պառկել էր տախտի վրայ:

—Մայրիկ տու—էդ, —վրայ ընկաւ Թեկղէի մեծ որդին... Ուտացրու...

Սրան հետեւց և երկրորդը:

—Ուտացրու... է... տու—էդ... աղաղակում էին երեխաները լաց լինելով:

—Մպասեցէք, սպասեցէք... յետոյ:

—Ուտացրու—է—... տու—էդ—լալիս էին երեխաները:

—Չոռ ու ցաւ, —գոչեց Թեկղէն:

—Կարիր, այ կին, էլ մի լացացնի, —ասաց Զոսիմէն:

—Ահա, ահա տրաքուեցէք, անկշտումներ... գետինը մտնէք, գետինը:

Թեկղէն երկուսին էլ մի-մի կտոր հաց շպըրտեց, իսկ մնացած խուրջինով ներքին պահարանում պահեց, սենեակից դուրս դնաց և երեխաներին էլ հետը տարաւ:

Հայր Զոսիմէն նայեց դուրս գնացող Թեկղէն և նրան հետևող մերկ երեխաներին և ակամայ խորը ախ քաշեց:

«Աչքածակ» անցաւ նրա մտքով և դարձեալ նրա աչքի առաջ ներկայացաւ այժմեան զբութիւնը, իր ծուխը, տրանջող գիւղացիները, էվթիմէի խօսքերը, Միքայէլ երեցը և նրա սիրար կրկին պաշարեցին զարհուրելի վիշտն ու յուսահատութիւնը: Այժմ սրա վրայ աւելանում էր նաև ընտանեկան պատկերն էլ: Այն, այն, պէտք է չոփ աչքերը, ճիշտ աչքերը տնկած պէտք է ունենայ, թէ չէ ուրիշ մօր չի կարող գնալ և իշրան կը կնասի: —Ամեն ցնորքներից ձեռք պէտք է վերցնի և ապրի այնպէս, ինչպէս որ ուրիշներ են ապրում: Արդէն ժամանակ է որ գիւղի սովորութեանը հետեւի, ինչպէս որ Պետրոսն է ասում, իսկ ուրիշ ամեն բան սուտ է ու մնասկար: Երբ այս ասում էր ինքն իրան ապագայում առաջնորդուելու համար, յանկարծ յիշեց Անուսիայի ընտանիքը, ուր որ պառկած էին երկու մեռնող և կարծես թէ մէկը շշնջաց նրա ականջին. —«Քո եկամուտն է այդ». այդ մտքի

արթնացումը բոլորովին կլանեց երիտասարդ քահանային։ Միթէ այս տեսակ մտքեր արթնացնելու պատճառ կը դառնար Անուսիայի ընտանիքի կարիքը և աղքատութիւնը։ Միթէ այսպիսի մտքին կը նաև այսպիսի հայր Զոսիմէի ուղեղը, նրա գիտակցութիւնը...Եւ հայր Զոսիմէն ձմլուած սրտով շուռ եկաւ միւռ կողքի վրայ, երեսը թաղելով բարձի մէջ և այդպէս էլ մնաց անշարժ։

Շատ ժամանակ չանցած, նրա յոզնած ու ընկճուած մարմինը հանգստացաւ և ցանկալի մուացութեամբ մէջ ձգեց երիտասարդ քահանային։

—

Հիւանդ Ալէքսու առողջութիւնը ոչ թէ լաւանում էր, այլ ընդհակառակը հէնց նոյն երեկոյեան սաստիկ վատացաւ։ Անհանդիստ շուռ ու մուռ էր դալիս անկողնում, երբեմն ինչ որ օտարոտի խօսքեր էր արտասանում։ Շշմած Անուսիան որդու զլխափերը նստած, վշտից ցամաքած, ապշած նայում էր նեղացած հիւանդին։ Ոչ մի յոյս, ոչ մի տեղից օգնութիւն, որեւէ աշակցութիւն չը կար։

—Աստուած ամենակարող... Աստուած ոգորմած, —երբեմն բացականչում էր Ալֆէզան, խոկ Անուսիան որդուն էր նայում և լուռ, բոռնցքով կուրծքը ծեծում։

Զարհուրեկի գիշերը մթնեց խեղճերի հա-

մար։ Ամբողջ տունը փաթաթուած էր խաւարով, օջախի վրայ վառուում էր աղօտ կրակը և այդտեղ տիրող սաստիկ լուսթիւնը խանդարում էր միայն Ալէքսու բացականչութիւնները, կամ էլլիկիայի թոյլ ձայնը, որ երբեմն հարցնում էր մօրը։

—Մայրիկ, ի՞նչպէս է Ալէքսին։

—Ի՞նչպէս պիտի լինի, որդի, այժմ՝ կարծես է, —պատասխանում էր մայրը և տան մէջ կրկին լուսթիւն էր տիրում։

Վշտից շշմած Անուսիան հիւանդի զլխափերը նստած նայում էր որդուն։

—Մայրիկ, —գոչեց հիւանդը և զլուխը բարձրացրեց։

—Որդի, Ալէքսի այստեղ եմ... ի՞նչ ես ուզում —վրայ ընկաւ Անուսիան։

—Մայրիկ —նեղացած և աւելի բարձր ձայնով գոչեց Ալէքսանը։ —Մայրիկ, մայրիկ, մայրիկ, —կրկնում էր անդադար և զլուխը շարժում։

—Ալէքսի, որդի... այստեղ եմ... քո հոգուն մատաղ... որդի։

Բայց նա երեկ մօր խօսքերը չէր լսում, զարհուրեկի կերպով աչքերը շարժում, երբեմն մի խօսք էր արտասանում, երբեմն միւսը։

Անուսիան սարսափածի նման ձեռքերով շըփում էր որդուն, ինչոր բան ասելով, ինքն էլ չը հասկանալով... Արտասուրները նրա ձայնը կտրեց և աչքերը կապեց... Յուղուած դէմքը,

դողդոջուն շրթունքները խաճարում էին խօսքերը արտասանելու:

Հիւանդը մի անգամ ոյժով փորձեց բարձրանալ. բարձրացաւ, աչքերը չոեց և ծանրքարի պէս անկողնի վրայ ընկաւ:

Անուսիան բազէի նման ընկաւ որդու վրայ, շուռ առեց մէջքի վրայ և գարհուրելի ձայնով ճշաց.

—Ալէքսի... որդի:

Զարհուրելի ձայնը յանկարծ լոեց:

—Մայրիկ... մայրիկ... ի՞նչ խարսր է, ի՞նչ պատահեց, —կանչեց սարսափահար էլիզիան, որ անկողնի վրայ նստել էր.— ի՞նչ էր մայրիկ:

—Ոչի՞նչ, ոչի՞նչ որդի, պառկիր, պառկիր:

—Լաց ես լինում, մայրիկ:

—Ել ուրիշ ի՞նչ է մնում ձեզ նայող մօրը, ձեր անտէր մօրը. վայ ինձ, վայ ինձ...

Անուսիան վեր կացաւ: Ալէքսուն վերմակով ծածկեց, տախտից իջաւ ներքեւ և սկսեց դէպի դուրս կանչել.

—Մարիկօ, Մարիկօ:

Ներս եկաւ խճճուած մաղերով փոքրիկ աղջիկ:

—Այստեղ նստիր,—մատնացոյց անելով տախտի վրայ, ուր պառկած էր Ալէքսին.—նըստիր և նայիր,—ասաց ու տանից դուրս գնաց:

—Մայրիկ, ի՞նչ է անում Ալէքսին,—հարցրեց դուրս գնացող մօրը էլիզիան:

—Բնած է, որդի, քնած:

Երբ Անուսիան գուրս գնաց, անակում խորին լուսթիւն ափրեց: Փոքրիկ ազջիկը ցածը աթուի վրայ նսած անվատահ նայում էր երբեմն էլիզիային, երբեմն դամնը, իսկ երբեմն վերմակով ծածկուած եղբօրը:

Լուսթեան մէջ մի ինչ որ ձայն լսուեց զբրուց. այդ ձայնը մինչև էլիզիայի ականջին էլ հասաւ. ձայնը հետզհետէ աւելի սպազ էր լսում: Ավոր լաց էր լինում, կարծես ողբում էր:

—Մարիկօ... տես կարծես մէկը լաց է լինում, այնտեղ, նայիր,—և էլիզիան նստեց անկողնում:

Մարիկօն վեր կացաւ, մօտեցաւ պատին, վնասրեց պատի ձեզը և պատին կուտաւ. լացի ձայնը կրկին լսուեց:

—Ո՞վ է, Մարիկօ:

—Մայրիկը, մայրիկը լաց է լինում,—պատասխանեց Մարիկօն:

—Մայրիկ լաց է լինում:

—Հա... Ալիֆէղան եկաւ..., նա էլ է լաց լինում:

Էլիզիան ցնցուեց, շարժուեց, գէլրան վնասրեց դատաւ և զլուխը անցկացրեց:

—Հօրեղբօր կին Դափինէն եկաւ... քեռի իւսնէն... Պուպուլօ—էլինիչկան էլ գալս է... նա էլ է լաց լինում... թոթովում էր փոքրիկ Մարիկօն, իսկ այն չէր նկատել, թէ կենողանի

դարձած կմախք էլիզիան ինչպէս հաղաւ գէյրան,
վեր կացաւ անկողնից, և խարխափելով մօտեցաւ
Ալէքսու կողմը. բարձրացաւ տախտի վրայ և իր
ոսկրացած ձեռքերով սկսեց վիրմակը յետ քաշել
եղբօր երեսից:

Վերմակի տակից երեաց այլանդակ տեսքով
Ալէքսին, աչքերը ցցուած, կզակը պատած կարճ
միրուքով. զարհութելի կերպով կը ճացըրած ատամ-
ներով:

Էլիզիան սարսափահար ճշաց ամբողջ ուժով
և ուժասպառ ընկաւ եղբօր անշնչացած դիակի
վրայ:

Մարիկօն միայն այժմ նայեց և տեսաւ թէ
չէ Ալէքսու վրայ ընկած էլիզիային, սկսեց ա-
ղակակել.

— Մայիկ, էլիզիան վեր կացաւ... վեր կա-
ցաւ էլիզիան... Ալէքսու մօտ է:

Այս աղմուկի վրայ ցնորուածի նման ներս
ընկաւ Անուսիան և նրա հետ էլ միւսները, որոնք
դանւում էին տան առջև ծածկոյթի տակ:

— Սպանեցիք, սպանեցիք, դաւակներս, վայ,
վայ, վայ—զարհութելի ճայնով ճշաց պառաւ կինը
և տախտի վրայ թռաւ էլիզային հեռացնելու:

Տունը մի ակնթարթում մարդկանցով լցուեց.
սկսուեց սրտաճմին, աղաղակ, լաց ու կոծ, սուզ
ու շիւան:

Ուշաթափ էլիզիային հեռացըրին դիակից և
մեռելի պէս պառկացըրին իր անկողնում:

Նոյն երեկոյեան էլիզիան էլ հեռացաւ այս
աշխարհից: Ամբողջ զիւղը սգում էր, խեղա
նուսիայի հետ միասին այս երկու մեռելի հա-
մար:

— Ամենակարող Աստուած, ողորմած Աս-
տուած, ինայիր, ներիր մեղ՝ մեղաւորներիս,—
ամեն կողմից ազաղակում էին զիւղացիները:
Այս երկու դազաղը, որոնց մէջտեղ նստած էր
թշուառ մայրը, որ երբեմն մէկին էր փաթաթ-
ւում, երբեմն միւսին,—այդ երկու դազաղը օ-
տարուակ երկիւղ էր սփռում, միամիտ արարած-
ների վրայ. պարզ երեսում էր, թէ ինչպէս էր
տանջում նրանց: Նրանց միակ յոյս Աստուած էր
մտացել և այդ պատճառով նրա անունը աղեր-
սանքով էին կանչում:

Եւ հայր Զոսիմէն, որ դողդոջուն ձայնով այդ
գժբախտների վրայ կարգ էր կատարում, լցուում
էին արցունքով նրա աչքերը մեռելներին նայե-
լով, քանի որ շուրջը տեսնում էր իրաւ անտէր,
անօդնական, Աստծու յոյսով մնացած հոգւով
ձնշուած, անճար, ամեն կողմից թշուառ արար-
ածներին. նրա սիրտը տեղի ևս մորմոքւում էր,
կոկծում: Եւ այս ընդհանուր տանջանքը, վիշտը,
կարիքը, յուսահատեցնում էր, և միաժամանակ հաշ-
տեցնելով իր սեփական կարիքների ու ճակատա-
զրի հետ: Արտասունքները, որոնք նրա աչքերից
թափւում էին, վշտի, յուսահատութեան և իր
ճակատազրի հետ հաշտեցնելու արցունքներ էին:

Հէնց այդ էր պատճառը,որ այսօր այնպիսի
անասելի շնորհակալութեամբ ճանապարհ գրին
իրենց քահանային նրա ծխականները, որովհետեւ
ինքն ևս վշտացած, իր վշտացած հօտի հետ
միասին տաք արտասուքներ թափեց:

Այն, այդ վշտի և յուսահասութեան արտա-
սուքներ էին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0381904

ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

	Առաջ.
1. ՆԻՆՈՇՎԱԼԻ Է. «Ճրաման» (սպառում)	5
2. ԽՈԽՈՎԱԳՈԶԵ Թ. «Գերեզմանատանը» (սպառ.)	3
3. ԴՈՒՏՈՒ-ՄԵԳԵՐԵԼԻ «Անմեղ զոհ» (աառկիր ժաղությի կեանքից)	8
4. Դ.Ջ.ՋԱՂԻ Ա. «Ֆաթի»	5
5. ԷԿԱՆ.Ջ. ԻԱ. «Լուսնակ զիշերին...» (էսլիդ)	5
6. ՆԻՆՈՇՎԱԼԻ Է. «Գօվիա Ավշշիլի» (աատմաւածք Գու- րիայի կեանքից)	8
7. ԿԼ.ԳԻԱՇՎԻԼԻ Գ. «Ծխականների մէջ» (պատկեր)	10

Տպագրութեան համար պատրաստ է—ԵԱԿՕՅ ԳՈԳԵՑԱՇՎԱԼՈՒ
—«Ե՞նչ արեց օրօրօցի երգը» պատմուածք ութ պատկերով:

Յանկացողները կարող են դիմել՝ Զաքարիա Գրիգորեանցի «Կով-
կասեան զրավաճառանոցը»:

